ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2006. Т. LIX, № 2.

ՅՈՒՐԻ ԼԵՎՈՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծննդյան 65 - ամյակի առթիվ

Լրացավ մեքենագիտության և ռոբոտատեխնիկայի ասպարեզի ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Լևոնի Սարգսյանի 65 - ամյակը:

Յուրի Սարգսյանը ծնվել է 1941 թվականին Երևանում: 1962թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկամեքենաշինական ֆակուլտետը: 1964թ. ընդունվել է Մոսկվայի քիմիական մեքենաշինության ինստիտուտի ասպիրանտուրան "Մեխանիզմների, մեքենաների և ավտոմատ գծերի տեսություն" մասնագիտության գծով: 1967 թ. Մոսկվայի հանրահայտ մեքենագիտության պետական ինստիտուտում ժամկետից մեկ տարի շուտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, իսկ 1975 թվականին՝ դոկտորական ատենախոսությունը: Երկու տարի անց նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

1971-1972 թվականներին անցել է գիտական փորձառություն Ստենֆորդի և Իլինոյսի համալսարաններում, իսկ 1977-78 թվականներին նույն համալսարաններում աշխատել է որպես հրավիրված պրոֆեսոր:

Սկսելով իր աշխատանքային գործունեությունը Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ասիստենտ, Յուրի Սարգսյանն այնուհետև անցել է փայլուն ուղի՝ դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ: 1988 թ. ընտրվել է Երևանի պոլիտեխնիկական

ինստիտուտի, ապա՝ Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարանի ռեկտոր և այդ պաշտոնը վարել 18 տարի անընդմեջ, դառնալով Պոլիտեխնիկի ամենաերկարակյաց ռեկտորներից մեկը:

Կրթական ասպարեզի ականավոր գործչի անմիջական ղեկավարությամբ Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարանն առաջինը ԱՊՀ երկրների տարածքում անցավ լիակատար բազմաստիճան կրթական համակարգին՝ ստեղծելով առաջանցիկ իրավական – ծրագրային հիմք:

Յուրի Սարգսյանը հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 5 մենագրությունների, 30 գյուտերի և 6 պատենտների: Աշխատությունները նվիրված են մեխանիզմների սինթեզի տեսությանը և ավտոմատացված նախագծմանը, տարածական մեխանիզմների տեսությանը, ռոբոտատեխնիկական համակարգերի մեխանիկային, մեխանիզմների, ռոբոտների և ավտոմատացված համալիրների նոր տիպերի ստեղծմանը: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են մեխանիզմների և մեքենաների տեսության համաշխարհային II-X, Ամերիկյան ինժեներ-մեխանիկների ընկերության համաժողովներում, ԽՍՀՄ-ում տեսական և կիրառական մեխանիկային, մեխանիզմների և մեքենաների տեսությանը նվիրված համագումարներում, միջազգային այլ գիտաժողովներում:

Ընդհանրացնելով մեխանիզմների սինթեզի դասական երկրաչափական ուղղությունը (Բուրմեստեր-Շյոնֆլիսի տեսություն) շարժման մոտավոր վերարտադրության դեպքի համար, Յու.Սարգսյանը հիմնել է մեխանիզմների սինթեզի տեսության սկզբունքորեն նոր ուղղություն՝ ապրոքսիմացիոն կինեմատիկական երկրաչափություն, որը ստացել է միջազգային լայն ճանաչում, իսկ համապատասխան տերմինը պաշտոնապես ընդգրկվել է մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային տերմինաբանական ստանդարտում:

Ապրոքսիմացիոն կինեմատիկական երկրաչափությունը կինեմատիկական երկրաչափության ինքնուրույն ճյուղ է, որն ուսումնասիրում է շարժման մոտավոր վերարտադրությանն առչվող ապրոքսիմացիոն խնդիրների հատուկ դասը: Ուղղության տեսական հիմունքները շարադրված են հեղինակի " Аппроксимационный синтез механизмов " մենագրությունում (М., Наука, 1982), իսկ նոր տեսական ապարատի հիմքի վրա ստեղծված մեխանիզմների ապրոքսիմացիոն սինթեզի մեթոդաբանությունը և ունիվերսալ ալգորիթմնական մեթոդները՝ “Кинематика, динамика и точность механизмов” ·сщбхШ (Серия "Основы конструирования машин”, М., Машиностроение, 1984): Պրոբլեմի կարևորության և մեխանիզմների սինթեզի հայկական դպրոցի նվաճումների միջազգային ճանաչման մասին է վկայում այն փաստը, որ մեխանիզմների և մեքենաների տեսության համաշխարհային VIII համաժողովի (Պրահա, 1991թ.) հինգ պլենար նիստերից մեկը, որտեղ հիմնական զեկուցողը Յու.Սարգսյանն էր, նվիրված էր տարածական մեխանիզմների կինեմատիկական սինթեզի ապրոքսիմացիոն խնդիրների վերլուծությանը:

Մեխանիզմների սինթեզում վերջավոր չեբիշևյան մոտարկումների կիրառության ասպարեզում ձեռք բերած խոշոր տեսական արդյունքների համար Յու.Սարգսյանն արժանացել է Ամերիկյան ինժեներ-մեխանիկների ընկերության՝ լավագույն աշխատանքի համար սահմանած մրցանակին, ինչպես նաև՝ «Պրոկտոր և Գեմբլ» ընկերության հատուկ մրցանակին՝ տեսական արդյունքների կիրառության հեռանկարայնության համար:

Հետազոտական աշխատանքները, որոնք Յու.Սարգսյանի ղեկավարությամբ կատարվել են Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում մեխանիզմների տեսության, ռոբոտ-մանիպուլյատորների մեխանիկայի, պրեցիզիոն

թրթռամեխանիկական համակարգերի, միկրոմանիպուլյատորների, խողովակագլոցման սարքավորման ուսումնասիրության և նախագծման բնագավառներում, բազմաբնույթ կիրառություններ են գտել հատուկ նշանակության կառավարման համակարգերի (ԳՀԻ, Ալտաիր), խողովակների սառը գլոցման հաստոնների (Գլազովի, Ալմա-Աթայի, Չեպելի ծանր մեքենաշինության գործարաններ), կիսահաղորդչային սարքերի արտադրության ավտոմատացման միջոցների (կիսահաղորդչային տեխնիկայի Երևանի հատուկ նախագծային-կոնստրուկտորական բյուրո) և այլ սարքերի ստեղծման ժամանակ, արժանացել պարգևների տարբեր մրցույթներում և ցուցահանդեսներում: Նրա բազմամյա հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքում համալսարանում ստեղծվել է ինչպես ԱՊՀ-ի տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս առավել հայտնի գիտական դպրոցներից մեկը մեխանիզմների սինթեզի ասպարեզում: Հենց այդ տարիներին էլ այստեղ ձևավորվել էր հայ մեքենագետ-գիտնականների շնորհաշատ նոր սերունդը:

Յու.Սարգսյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Ղազախստանում: Մեքենագիտության ասպարեզում նրա հիմնադրած ուղղությունն այսօր էլ ունի բազմաթիվ հետևորդներ:

Արժեքավոր են նաև Յու.Սարգսյանի մի շարք աշխատությունները ինժեներական կրթության մեթոդաբանության, գիտական քաղաքականության և բարձրագույն կրթության ստրատեգիական պլանավորման ասպարեզներում: Կրթության ասպարեզում ակնառու ներդրումների համար 2002-ին Յու. Սարգսյանն արժանացել է Հայ կրթական հաստատության (ԱՄՆ, Լոս Անջելես) տարվա մրցանակին:

Իր ծանրակշիռ գիտական վաստակի համար Յու.Սարգսյանը 1986 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996թ-ին՝ իսկական անդամ:

Յու.Սարգսյանը վարում է նաև ակտիվ գիտական-հասարակական գործունեություն: 1989 թվից ՀՀ ԳԱԱ նախագահության, իսկ 1991 թվից՝ մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային ֆեդերացիայի (IFToMM) գործադիր խորհրդի անդամ է: 1994թ. ընտրվել է Միջազգային ինժեներական ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1995թ.՝ իսկական անդամ: Հանրապետական և արտասահմանյան մի քանի գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ է: Յու.Սարգսյանը մեխանիզմների և մեքենաների տեսության միջազգային տերմինաբանական ստանդարտի հեղինակներից մեկն է: Նա ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի անդամ է և մեքենագիտության ու մեքենաշինության աստիճանաշնորհող խորհրդի նախագահը:

1995թ. օգոստոսին Միլանում տեղի ունեցած IFToMM–ի IX համաշխարհային համաժողովում Յու.Սարգսյանին շնորհվել է IFToMM–ի հատուկ մրցանակը՝ մեխանիզմների և մեքենաների տեսության ասպարեզում ակնառու ծառայությունների համար: Պարգևատրվել է Պատվո և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշաններով, Անանիա Շիրակացու մեդալով:

Յու.Սարգսյանը նաև ճանաչված հասարակական և պետական գործիչ է: 1990-1995 թվականներին ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և Սահմանադրական հանձնաժողովի անդամ:

Տեղեկագրի խմբագրական կոլեգիան և բազմաթիվ գործընկերները, շնորհավորելով ականավոր գիտնականին ծննդյան 65-ամյակի առթիվ, մաղթում են նրան քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր ու հայրենանվեր գործունեություն: